



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013թ. ԹԻՎ 33/6-Լ
ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
«ԱՆՊԱՄՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարգսյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում (**այսուհետ՝ Կարգ**) լրացումներ կատարելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հավակնորդների մուտքի վճարների, փաստաբանների անդամավճարների, փաստաբանի օգնականի վճարների վճարումների և անդամավճարի գծով արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները կարգավորված են Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) դրույթներով:

Սույն որոշմամբ Կարգում կատարվել են լրացումներ, որոնք ուղղված են անդամավճարների գանձման և անդամավճարը չվճարելու հիմքով կարգապահական վարույթի հետ կապված հարաբերությունների հստակեցմանը:

* * *

1. Անդամավճարի պարտավորության մարման հերթականության վերաբերյալ լրացում.

Կարգով սահմանված է անդամավճարի վճարման կարգը, սակայն

04 մարտի 2020թ.

թիվ 5/11-Լ

ուղղակիորեն կարգավորված չէին այն իրավիճակները, երբ փաստաբանն անդամավճարի ընթացիկ պարտավորությունից բացի ունի նաև անդամավճարի որոշակի ժամանակահատվածի պարտք:

Հաշվապահական հաշվառման մեջ և վճարահաշվարկային հարաբերություններում գործում է այն կանոնը համաձայն որի առաջացած դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի մարման (մասնակի մարման) դեպքում մարված (մասնակի մարված) է ընդունվում ավելի վաղ ժամկետում առաջացած դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը:

Գործնականում՝ ղեկավարվելով նշված սկզբունքով, Պալատի ֆինանսական ծառայությունը յուրաքանչյուր դեպքում, երբ փաստաբանը կատարում էր անդամավճարի վճարում և իր վճարված գումարը բավարար չէր անդամավճարի ամբողջ պարտքը մարելու համար, ապա Պալատն առաջին հերթին մարված էր համարում փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը:

Նշվածի հաշվառմամբ առաջացել է անհրաժեշտություն անդամավճարի վճարման կարգը սահմանող կետում լրացում կատարել և անդամավճարի պարտավորության մարման հերթականության վերաբերյալ փաստացի կիրառվող վերոնշյալ սկզբունքն ամրագրել գրավոր՝ Կարգի կանոնով:

* * *

2. Երկրորդ կամ հեղադա կարգապահական վարույթով անդամավճարի արտոնություն սահմանելու վերաբերյալ լրացում.

Գործող Կարգի 17-րդ կետով անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպքում կարգապահական վարույթը կարճվում է, եթե մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը փաստաբանն ամբողջությամբ մարել է անդամավճարի պարտքը:

Գործող կարգավորման համաձայն նշված արտոնությունը գործում էր միայն մեկ անգամ՝ փաստաբանի նկատմամբ անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված միայն առաջին կարգապահական վարույթի ժամանակ:

Պալատի խորհուրդն՝ անդամավճար չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների քննության պրակտիկայից ելնելով, գտնում է, որ անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում անհրաժեշտ է կարգապահական վարույթը կարճելու հնարավորություն սահմանել նաև այն դեպքում, եթե անդամավճարի պարտքի մարման հիմքով նախորդ կարճված վարույթի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո անցել է երեք տարի:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ և 15-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ

վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **8-րդ կետը** լրացնել հետևյալ նախադասությամբ. **«Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում, առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում:»:**

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-L որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **17-րդ կետի երկրորդ նախադասությունը** «պարտքի մարման հիմքով» արտահայտությունից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ. **«, բացառությամբ այն դեպքի, երբ անդամավճարի պարտքի մարման հիմքով նախորդ կարճված վարույթի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո անցել է երեք տարի»:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

04 մարտի 2020թ.

թիվ 5/11-L

ք. Երևան